ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

18.04.2017 15:00



Ապրիլի 14-ին և 15-ին Վանաձոր և Ալագյազ համայնքներում ՀՀ փաստաբանների պալատը «Ֆեմիդա» հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում կազմակերպել էր *«Վարչարարության, վարչական վարույթի և վարչական դատավարության հիմնահարցերը»* թեմայով դասախոսություն-քննարկում: Դասախոսությունը վարել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Էմիլ Ամիրխանյանը և փաստաբան Հունան Տեր-Վարդանյանը: Դասախոսության նպատակը վարչական վարույթի և վարչական դատավարության ոլորտում քաղաքացիների, այդ թվում ազգային փոքրամասնությունների իրազեկվածության բարձրացումն էր: Միջոցառմանը մասնակցել են Վանաձոր քաղաքում և շրջակա համայնքներում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ և Վանաձորի քաղապետարանի աշխատակիցներ:

Միջոցառմանը բանախոսները ներկայացրել են վարչարարության, վարչական վարույթի և դատավարության հիմնական սկզբունքները և ընթացակարգերը: Քննարկվել են պրակտիկայում հաճախակի հանդիպող խնդիրները և դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկան: Քաղաքացիներին ներկայացվել է նաև ծրագրի շրջանակներում մշակված և Femida.am կայքում գործող առցանց ֆորումը, որի միջոցով վերջիններիս հնարավորություն է ընձեռվում համապատասխան ոլորտի մանագետներին ուղղել իրենց հետաքրքրող հարցերը և հնարավորինս կարճ ժամկետում ստանալ դրանց պատասխանները: Ֆորումի հիմնական առաքելությունը առաջադեմ տեխնոլոգիաների կիրառմամբ վարչական վարույթի և դատավարության ոլորտում հանրության իրավական իրազեկվածության մակարդակի բարձրացումն է:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության աջակցությամբ:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })